ՈՐԲԱՑԱԾ ԱԶԳԸ

Իր անոյշ երկրից քշուած, հալածուած
Աշխարհ է ընկել առանց ապաւէն.
Իր երկրում սովի, մորթուելու մատնուած
Որբ հայը անարգ թուրքից անօրէն...

Նա նաւի ղեկը կորցրած յուսահատ
Պտոյտ է գործում ընդարձակ ծովում.
Կուրծքն է ցոյց տալիս երկնին գթառատ
Գութ է աղերսում... բայց ա՜խ, չէ լսում...

Երկինքը սառն է այդ վշտի առաջ...
Մորթո՜ւմ է հայը տանջուա՜ծ լալագին
Երկինքն է նայում անտարբեր դարձած
Երկրի աւերման, ժանտ կոտորածին...

Ա՜խ, հայը որբ է... չունի՛ քարեկամ
Նա ձայն է հանում... բայց չկա՜յ լսող...
Ով էլ պատահում հարուածով դաժան
Գլխին է խփում... չկա՜յ գթացող...

Իր անոյշ երկրից քշուած, հալածուա՜ծ
Աշխարհ է ընկել առա՜նց ապաւէն
Իր երկրում սովի, մորթուելու մատնուած
Որբ հայը անա՛րգ թուրքից անօրէն...

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ

Նուշի 1905 թ.